ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/183

«23» 01 2015թ.

**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով**
**գնման ընթացակարգով շրջանակային**
**համաձայնագրեր կնքած մասնակիցներին**

«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածում նշված ապրանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակ, Ս. Սարգսյանին, մինչև 2015թ. փետրվարի 5 -ը, ժամը 10:00-ը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակում, 2015թ փետրվարի 5 -ը, ժամը 10:00-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՔ-ԾՀԱՊՁԲ-15/60»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ**
**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝** **Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Կատարող՝ Ս. Սարգսյան
հեռ. 514-239